ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ << ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՊԵՐՃՈՒՀԻ ԵՎ ԱՐՄԵՆ ՆԱԼՊԱՆՏԵԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >>ՊՈԱԿ

---

04407665

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ <<ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՊԵՐՃՈՒՀԻ ԵՎ ԱՐՄԵՆ ՆԱԼՊԱՆՏԵԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >> ՊՈԱԿ

Արմավիր մարզ

գ. Նալբանդյան 3պղտ,42ենք

հեռ. 077-11-66-22

nalbandyandproc@mail.ru

Թիվ – 29

<< 30 >> Հոկտեմբերի 2024թ.

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետ

Դ. Խուդաթյանին

Հարգարժան պարոն Խուդաթյան

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի << Նալբանդյանի Պերճուհի և Արմեն Նալպանտեանների անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ - ում առկա է թափուր հաստիք :

Հայոց լեզու և գրականություն - 8 դասաժամ

Կից ներկայացնում ենք ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի հայտարարությունը:

Տնօրեն Տ. Գևորգյան

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի << Նալբանդյանի Պերճուհի և Արմեն Նալպանտեանների անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ՝ հայոց լեզու և գրականություն առարկա ( 8 դասաժամ ) թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով ՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլը անցկացվում է ըստ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել ՝

- Դիմում / ձև 1/, 1լուսանկար 3x4 չափսի

- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/

- Անձը հաստատող փաստաթուղթ

- << Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

- Ինքնակենսագրություն / ձև 5 /

- Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ

-Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/

- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից 2024թվականի հոկտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր $9^{00}$ –ից մինչև $15^{00}$, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թվականի նոյեմբերի 20 -ին՝ ժամը $14^{00}$-ին, ՀՀ Արմավիրի մարզի << Նալբանդյանի Պերճուհի և Արմեն Նալպանտեանների անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ում: Հասցեն ՀՀ Արմավիրի մարզ գ.Նալբանդյան 3պղտ, 42շենք:

Տեղեկությունների համար զանգահարել 077-11-66-22 հեռախոսահամարով: